

ԿԵՌԱՆ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Հայաստանի վերջին մեծ քաղութին. XIII դար

ԿՈՐԴ ՄՈՒԹԱՎՅԱՆ (Փարփակ)

Հայկական առանձին թագավորությունները, ոռոնք հիմնագրվել էին IX—X դդ.¹ արարական խալիֆայության մայրամուտին, XI դարում այլևս չկարողացան զիմապրել արհելուաբեց եկող բլուզանդական ձնշմանը և արևոլքից խափանցած իջուրրական հրոսակներին։ Հենց այդ ժամանակ էր, որ Հռոմեական կայսրության արեկոլյան սահմանադրություն, Միջերկրական ծովի հյուսիսարեկոլյան երուսալում գտնվող Կիլիկյան հոչակվեց իր քաջ հայ բնակչությամբ, որը ստիպված էր ոչ հեռու անցյալում արտագաղթել իր՝ Հայրենիքից և առաջանարկ Հասատավել այստեղ։ Բնականարար, Կիլիկյան հայկական պետության վերականգնման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին։ Առաջ եկան նոր հարստություններ Ավանդական բյուզանդական կողմնորոշում ունեցող Հեթումյանները հաստատվել էին այլ պիտի ամուր բերդերում, ինչպիսիք էին Լամբրոնը և Պապիկոնը Դրանք գտնվում էին Տավրոսյան լեռները հատող միակ կիրճում՝ Կիլիկյան լեռնանցքում կամ Դրոնք Կիլիկություն։ XI դարը նաև խաչակրաց պատությունների ստեղծման դարաշրջանն էր, որոնց աշխարհագրական սահմանները մերձենում էին Կիլիկյանին։ Խորինյան իշխանությանը, որը հաստատվել էր Տավրոսի արեներում, Կարողացավ հմտորեն օպտվել այս նոր գործոնից և 1198 թ. հունվարին թագավորություն հիմնեց։ Խորինյան կոնը գերմանահասումեական սբգ. կայսրության հովանու և երբոք թագավոր դարձավ։ Հեթումյանների հետ հաշտեցումը դինաստիական ամուսնության հետեանը էր. 1219 թ., առանց արու ժառանգ թողնելու, մահացավ կոնը I-ը։ Նրան հաջորդեց մանկահասակ դուստրը՝ Զարեկը՝ որը Կիգրոսի Սմորի I կուսինյան թոռն էր. Նո կառավարում էր խնամակական խորհրդի իշխանության ներքո, ուր ամենազորեղը Հեթումյանների կրտսեր ճյուղի ներկայացուցիչ Կոստանդին Պապեռնցին էր։ Վերջինս պարտագրեց Զարեկին ամուսնալ իր որդու հետ, որը 1226 թ. դարձավ Հեթում I թագավոր։

Եյս դարաշրջանում Կիլիկյանի հայկական թագավորությունը, չնայած իր հղորությանը, կախում ուներ հյուսիսային Հարեւանից՝ Ռումի թյուրբ-սելջուկյան սուլթանությունից։ Եյս վերջինին 1243 թ. օսմանական մոնղոլները, որոնք նոր էին երեացել պատմության թատերաբեմում։ Հեթում I արքան որոշեց գաշնակցել մոնղոլների հետ։ Սակայն Հեթումյանների ավագ՝ Լամբրոնի հյուղը հավատարիմ մնաց սելջուկյան գերակային։ Կոստանդին Լամբրոնացի իշխանը մասնակցեց 1250 թ. Կիլիկիա ներխուժած թյուրբերի արշականքին, որի համար նրան, ինչպես նաև նրա որդի, «սեբաստոս» և իշխանաց իշխան։ Հեթում Լամբրոնացուն պատճեցին պետական դավաճանության մեղադրանքով։ Երբ Եղիպատոսում իշխանության դրուի անցան մամլուկները, աճող վտանգի առջև անհրաժեշտ դարձավ երկու ճյուղերի հաշ-

¹ C. M. Laffian. Le royaume arménien de Cilicie. Paris, 1993.

² Մանր մամանիկաղորություններ (XIII—XVIII դդ.), կազմեց Վ. Հակոբյան, հ. 1, Երևան, 1951, լ. 81 (այսուհետեւ Մանր մամ.), ԺԳ դարի հիշատակարաններ, կազմեց Ա. Մամուսյան, Երևան, 1984, հ. 352, 440, 573, լ. 440, 538, 705 (այսուհետեւ ԺԳ դարի հիշ.)։

տեղումքը թագավորն իր որդուն՝ զահի ժառանգորդ Լեռն իշխանին, ամուսնացրեց պատմված իշխան Հեթում էամբրոնացու զատրիրից մեկի հետ Այս զատեր անունը, բոտ բատակիրի հունակար ավանդույթի, հունական էր՝ Կիո Անհան, այսինքն՝ «Տիրուհի Անհան» Հայկական սկզբնադրյուրներում այդ անունը կրվում էր Կեսան։ Այս անունը հազվադեպ է Հայոց պատմության մեջ։ Նույն անվան մյուս կրողն էլ Հեթում էամբրոնացու քույրն էր՝ մեր Կեսանի Հորաբույրը Ամուսնությունը ական ունեցավ 1262 թ., իրաղարձությունը հավերժացնելու համար ավետարան պատվիրվեց ամենանշանավոր Հայ մանրանկարիչներից մեկին՝ Թորոս Ռոսլինին, որն աշխատում էր Հոռմելայի Հայոց կաթողիկոսարանում։ Այլ պատկերների հետ միասին Ռոսլինը նկարել է նուև ապագա թագավորական զույգի զիմանկարը³, Դա Հայ իշխողների մի հաղիպազրուած զիմանկար է, որը հասել է մեզ, Հեթում և թագավորը՝ նրանց ավագ որդին և մասնակը, իր ժամանակազրության մեջ հաստատում է 1262 թ. ամուսնության բազարական բնույթը։ «Ի սոյն ամի (1262 թ.—Ա. Բ.) կարգեցաւ թագաւոր որդին Հայոց Լեռն, և ի սոյն ժամանեցաւ Լահերքօն ընդ թագաւորին Հայոց»⁴, Հետազայում զրված բազմաթիվ հիշատակարաններ շիշուական կամաց ամսամատական մասին⁵, միաժամանակ ակնարկելով նրա իրաղունքների վերականգնումը։

Ո՞վ էր Կեսանի մայրը։ Օրկար ժամանակ զա անհայտ էր, և միայն հիմների կողմանի եղբայրների և բույրերի անունների լատինական հնչողության վրա, և նիմազրվում էր, որ նրանց մայրը ֆրանկ իշխանուհի է եղել⁶, իրք, նրա անունը զանում ենք 1285 թ. բնորինակված մի Աղոթազրբում⁷։ Այսական բնիւրցում ենք. «Եւ մայրն իմ զինքանաւ, և զրոյրն իմ զթաղուհի Հայոց Կեսան»⁸։ Այս անունը զտնում ենք նաև 1274 թ. բնորինակված մի ձեռազիր ճողովածուի մեջ, որը պահպում է Փարիզի Աղոթազրին զրադարանում⁹, Մատյանում ամփոփված պատմական կան վերաբերելով բազմաթիվ աստվածաբանական բնագրեր և մի խումբ հիշատակարաններ¹⁰, որը հիշատակված է երկու անուն. Կեռան թաղուհի և ինչ-որ Թեոփանու՝ «մայր» կոչումով։ Մի շաբաթ հեղինակները¹¹, հիմք բնդունելով այս Ճողովածուի հետագա բնորինակությունները¹² կամ բնորինակված հիշատակարանների մի մասը, և նիմազրել են, թե Թեֆանոն (այլ կերպ՝ Թեոփանոն) Կեռան թաղուհու մի այլ անունն է։ Սակայն Փարիզի ճեռադրի մյուս հիշատակարանները խոսում են ոմն անտեսի մասին որպես՝ «միանձնուհի տիկնանց տիկնոջ»¹³, ինչպես նաև «միանձնուհի» Թեոփանոյի մասին¹⁴, Պարզ է, որ

3 Երուսաղեմի Ա. Հակոբյանց գանքի ժամանակարան, ձեռ. № 2660, թ. 288։

4 Մանր ժամ., էջ 82։

5 ԺԳ զարի Ծիշ., № 330, 352, էջ 416, 440։

6 W. D. Rüdt-Collenberg. *Die Rupenice: Hethumides and Lusignans*. Paris, 1963, p. 61, n. 74 եւ ։

7 Մաշտոցի անվան Մատենագարան (ՄՄ) ձեռ. № 6332, էջ 291ր։

8 ԺԳ զարի Ծիշ., № 613, էջ 767։

9 Հայորեն ճեռազիր № 42։

10 Նույն տեղում, էջ 29ր, 38ր, 132, 236ր։

11 Ղ. Ա. Լիշան. Միստան. Վենետիկ, 1885, էջ 519, և. Ա. Ա. Առաջան. Հայոց անձնանունների բառարան. հ. 2, Երևան, 1944, էջ 616; F. Macler. Catalogue des manuscrits arméniens de la Bibliothèque nationale. Paris, 1908, p. 22; Rüdt-Collenberg. Op cit., p. 62 ուշ. 83։

12 Երուսաղեմի Հայոց պատրիարքություն, ձեռ. № 898, թթ. 24 և 72 (Զեռազրացուցակ, էջ 413), Վենետիկի միթրարյան միարանություն, ձեռ. № 294, թթ. 73 և 75 (Զեռազրացուցակ, հ. Բ., սյուն 1057); Այս երկու ձեռագրերի էջերը համապատասխանում են Փարիզի Հայերեն № 42-ի թթ. 38ր և 132 ի հետ։

13 Թթ. 54։

14 Թթ. 236։

այդ տնտեսի անվան տակ պետք է տևսնել Կեռան թագուհու մորը, որը հանդիս է զայխս Ծիռքանու անվամբ, և ոչ թե իրեն՝ բագուհուն։ Մի ձշզրիտ ընթերցում հաստատում է զերեում Հշկած 1285 թ. Հիշատակարանի տեղեկությունները։ Այս ժողովածուն դրվել է 1274 թ., Կեռան թագուհու մոր՝ Ծիռքանուի պատվիրով, որը հավանաբար վանական կարդ է մտել իր ամուսին Հեթում Լամբրոնացու պատժկելուց հետո։ Այլ կերպ անկարելի է բացատրել, ին ինչո՞ւ է թաղուհին վանական կարդ մտել, եթե իր ամուսինը զահի վրա էր և ինքն ուներ վեցից ավելի երեխա։ Արդեն վանք մտած Ծիռքանուի այս պատվիրը ամեն դեպքում հաստատում է Հեթումյանների հետ կապված զիտնականների և գրողների հավաստիացումները՝ ընտանիքի հովանավորչական գործունեության մասին։

Այս բնագավառում Կեռանը ևս մեծ վաստակ ուներ։ Մեր ձեռքի տակ ունենք 1283 թ., Կիլիկիայի Սկեռա վանքում, թաղուհու համար ընդորինակաված մի զեղեցիկ ավետարան¹⁵, որը պարունակում է բազմաթիվ նկարազարդումներ։ Հատկապես նշանավոր է «Կեռան թագուհու Աւետարանը», ամենափառաճեղ Հայերեն ձեռագրերից մեկը, որն ընդորինակվել և նկարագարդվել է 1272 թ.՝ թագուհուն վայել մի պատվիր, որը բավական է սերունդների տոշի սեփական ներգրումով հպարտանալու համար։ Նկարչի անունը մեզ չի հասել, սակայն նա ոչնչով չի դիշում Թորոս Առաջինին։ 380-րդ էջի վրա, Աստիճամամոր նկարի տակ, պատկերված են ծնկաչոք արքան, թագուհին և նրանց երեխանները։ Սա հավանաբար աշխարհի ամենահռչակավոր հայկական մանրանկարն է, Այն ավելին է քան առաջին դիմանկարը, որը ունեցել է որևէ հայ թագուհի (եթե հաշվի շառնեւք Զարեհի դիմանկարները, որոնք գրոշմված են Հեթում I-ի դրամների վրա)։

Ըստ մանրանկարի այդ ժամանակ դեռ ողջ են եղել Կեռանի հինգ զավակները։ Չեռաղրի հիշատակարանը հաղորդում է մեծ զստեր՝ Զարեհի մահվան մասին¹⁶, Ըստ այլ հիշատակարանների, ժամանակագրությունների և պատմությունների¹⁸ հասրավոր է զանել այստեղ պատկերված երեք որդինների և երկու զստերի անունները, դրանք են՝ 1265 թ. ծնված դահածառանդ Հեթումը (ապագա Հեթում II թագավոր), Կռոտանդինը, ապա Ֆիմին, թիւ այն կողմ՝ Սիրիլը 1269 թ., Թորոսը՝ 1271 թ.։ Սակայն այստեղ միայն սկիզբն էր։ Տարրեր սկզբնաղբյուրներ արձանագրում են հետազյում ծնված երեխաների տպագործի մի ցանկ։ 1262 և 1283 թթ. միջև Կեռանն ունեցել է ավելի քան առանձին երեխա, որոնցից երեքը երկորույակներ են, Պետք է նշել, որ նըանցից շատերը կարճ կյանք են ունեցել։ Այնուամենայնիվ, զարմանալի է արքայի անձնական քարտուղար Վահրամի վկայությունը, ուր վերջինս խոսում է Լեռնի մահվան պահին նրա երեք որդինների մասին¹⁹, այն ժամանակ, եթե Հովհաննես Դարդիլը՝ վերջին թագավոր Լեռն V-ի (Լեռն II-ի թոռնորդի) խոստվանահայրը, 1380 թ. գրում է, թե արքան «մահացավ առանց ժառանգիւ»²⁰, Իրականում Լեռն II-ի և Կեռանի հինգ որդինները՝ Հեթում II-ը,

15 ՄՄ, ձեռ. Հ 6761. ԺԳ դարի հիշ., Ա 410, լզ 538։

16 Երոսաղեմի հայկական պատրիարքություն, ձեռ. Ա 2563. ԺԳ դարի հիշ., Ա 330, լզ 413. Մւալիս. և ուսուու. թ. 9.

17 Թրմ. 373, ԺԳ դարի հիշ., լզ 416.

18 Հիշատակաղբությունները տե՛ս ՄՄ ձեռ. Ա 5458, 4965, 10675, 4515, 1526, հմմտ. ԺԳ դարի հիշ., Ա 275, 278, 293, 313, 466, լզ 334, 338, 359, 395, 567, Երոսաղեմի հայկական պատրիարքության ձեռ. Ա 2563, հմմտ. ԺԳ դարի հիշ., Ա 330, լզ 415, Վենետիկի Միաբարյան միարանություն, ձեռ. Ա 10, հմմտ. Դ. Ա է ի շահ. Հայապատում. Վենետիկ, 1901, Ա 361, լզ 543, ժամանակագրությունները տե՛ս Մանր ժամ., Հ. 1, լզ 32 և հու. Հ. Բ, երեան, 1956, լզ 105, 182.

19 Recueil des historiens des croisades, Docu: entis arméniens, t. I, Paris, 1869, p. 531.

20 Կույն տեղում, Հ. II, Փարիզ, 1905, լզ 161.

Սմբատը, Թորոսը, Կոստանդին 1-ը, Օշինը և երեք թռոները՝ Թորոսի որդի Հետն 111-ը, Օշինի որդի Հետն 1V-ը, Զարեկի որդի Դի զր Լուսինյանը բազմել են Սովորացի վրա 1289 թ. (Հետն 11-ի մահից հետո) մինչև 1344 թ.: Նշանակում է, Կեսարը ճինջ թաղավորի մայր է, իսկ երեքը՝ առաջիկը: Այս ցանկում կարելի է ավելացնել նաև Շիտային, որն ամուսնացել էր Միքայել VIII Պալեոլոցի հետ և զարձել Բյուզանդիայի կայսրուհի, ինչպես նաև Կեռանի թռոնորդի, Ճայաստանի վերջին թաղավոր Հետն V Լուսինյանին (1274—75 թ.).

Նրանց որդիներից ավագը՝ թաղաժառանդ Հեթում II-ը բարդ անձնավորություն էր, մի համեստված ամուրի, որն անկարող եղավ բնարություն կատարել պահի և վանրի միջին: Թվում է, թե նա հիմնավետեցրել է իր մայր Կեռանին: Նման հնթաղործյան կարևոր է հանդիս նույն Հեթում II-ի զրած որոշ մեհնություններից: Երա կազմած ժամանակազրության մեջ կարդում ենք: «ԶԼՇ» (1285) փոխեցաւ ի Քրիստոս ամենազովելին հոգով և զեղեցկական անօր առարինի մայր իմ, Կեռան թաղուհին Հայոց, յողոսառոսի իմ (29):²¹ XIII զարի վերջում զրված Սաղմոսարանի հիշատակարանում նա նկարագրում է իր մոր արտաքինը. «Եւ ԶԼՇ» (1285), ի յաղոսառոս Թ (9) փոխեցաւ ի Քրիստոս ամենազովելին հոգով և զեղեցիկի մարմնով մայրն իմ թաղուհի Կեռան»²²: Գրանք հոգեոր մատյանում հազվագեց օգասպարծվող բնութագրումներ են: 1285 թ. տեղի ունեցած թաղուհու մահը զկայված է նաև այլ սկզբանապրայուններով²³, որոնք տեղեկացնում են, որ այդ պահին թաղավորը բացակայում էր երեքից: Նա զնացել էր իրական մոնղոլ տիրակալ Արգունի մոտ, եղիպատուի մամուկների հզորացող վտանգին դիմակայելու համար օգնություն խնդրելու:

Ամփոփենք. Կեռանին վերաբերող պատառիկային վկայություններից մեր առքել է հառանում բարձր ճաշակով մի իշխանուհի, որը սերում էր Հեթումյանների ավագ ճյուղից: Երա հայրը և պապը պատճեն էին զավաճանության համար, իսկ մայրը մտել էր վանական կարգ: Հաշտության նպատակով Հեթում I թաղավորը 1262 թ. նրան ամուսնացրել էր իր ավագ որդու, Կեռանի շորրորդ ողորա պազական զահաժառանդի հետ: Վերջինս 1266 թ. ձերբակարգեց մամուկների կողմից, զերի տարվեց Կահիրե, ապա՝ երկու տարի անց ազատ արձակվեց: 1269 թ. նա զահ բարձրացավ իրեն կեռն II թաղավոր: Զնայած ամուսնության «քաղաքական» բնույթին, թվում է թե այն հաջող է եղել: Արբայական զույգն ունեցել է բազմաթիվ երեխաներ: Հաստատապես նրա մասին խոսող հիշատակութանների տեղեկություններից կարելի է հնարինը, որ թաղուհին զեր է խաղացել նաև բաղաքականության մեջ, սակայն այդ չի հաստատվում որեւէ հստակ կովանով: Մինչդեռ նրա հովանավորչությունը արգեստի և գրականության բնագավառում լայնորեն փաստված է, մասնավորապես 1272 թ. նշանավոր ավետարանով, որը կրում է նրա անունը: Նրա երկու զիմանկարները (1262 և 1272 թթ.), ինչպես նաև ժամանակակիցների և մասնավորապես նրա ավագ որդու վկայությունները, շեշտում են նրա զեղեցկությունը: Կեռանը մահացել է 1285 թ., իր ամուսնուց շորս տարի առաջ:

Ցանկացած բարեկարգ բարեկարգ պատմ. դիմ. դոկտոր Ա. ԹՈՂՈՅԱՆՆ

21 Մանր Ժամ., Հ. Ա, էջ 85:

22 Հեթում II-ի Սաղմոսարանը, Bodleian Library, Oxford, 1° 56. ԺԿ զարի հիշ., Ն 573, էջ 705, մանր Ժամ., Հ. Բ, էջ 511.

23 Մանր Ժամ., Հ. Բ, էջ 148, Սահմուէլ Անեցի. Ժամանակադրութիւն. Հրատ. Ա. Տէր-Միքելեան. Վազարշաւատ, 1893, էջ 152, ՄՄ, ձեռ. Ն 1526, հմմա. նաև ԺԿ զարի հիշ., Ն 466, էջ 571 և 7. Աւիշան ն. Եղի. աշխ., Ն 335, էջ 453, Վիեննայի Միքարյանների վանը, ձեռ. Ն 78 և 439, Հմմտ. Յ. Տաշի ան. Զեղեցկությացակ. Վիեննա, 1893, էջ 333 և 306: